Հավելված N 468
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1.Պաշտոնի անվանումը, ծածկագիրը
Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) թեթև արդյունաբերության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.18-Ղ3-1)
1.2. Ենթակա և հաշվետու է
Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է նախարարին:
1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ
Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության բաժինների պետերը:
1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները
Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:
1.5 Աշխատավայրը
Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհր Մկրտչյան 5:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնութը, իրավունքները, պարտականությունները

1. կազմակերպում է Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների զարգացման ռազմավարության, միջոցառումների և պետական աջակցության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները,
2. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման խոչընդոտների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքների իրականացումը,
3. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության մեխանիզմների, ուղղությունների և գործողությունների մշակման աշխատանքների իրականացումը,
4. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության գործունեության մոնիթորինգի, ինչպես նաև այդ ոլորտերի ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքների իրականացումը,
5. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտում պետական և մասնավոր հատվածի համագործակցության երկխոսության մեխանիզմների ձևավորման,

ապահովման և պետական գործառնություններում մասնավոր հատվածի դերի բարձրացմանն ուղղված առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

6. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության ներուժի ընդլայնման և մրցունակության բարձրացման, տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ուղղությամբ քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքների իրականացումը՝ այդ թվում մասնավոր հատվածի ծրագրերը խթանող գործիքակազմի կիրառման ապահովումը,

7. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների արտահանման խոչընդոտների վերհանման, դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման և արտահանման զարգացման քաղաքականության մշակման աշխատանքները.

8. կազմակերպում է գործարար համայնքի հետ հետադարձ կապի ապահովման աշխատանքները.

9. մասնակցում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտներում ներդրումների ներգրավման քաղաքականության մշակման աշխատանքներին,

10. կազմակերպում է օրենսդրությամբ նախատեսված պետական աջակցության և արտոնությունների տրամադրման գործընթացի իրականացումը,

11. մասնակցում է տեխնոլոգիական զարգացմանն համընթաց առաջացող գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի մշակմանը,

12. կազմակերպում է ոլորտի ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգման, վերլուծության, ինչպես նաև առաջարկությունների մշակման աշխատանքները և վերջիններիս ներկայացումը Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և շահագրգիռ պետական մարմիններին.

13. կազմակերպում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման միջազգային փորձի ուսումնասիրության և համապատասխան եզրակացությունների և առաջարկությունների ներկայացման աշխատանքները.

14. մասնակցում է մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

15. մասնակցում է միջազգային շուկաներում Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության մրցունակության բարձրացման քաղաքականության մշակման աշխատանքներին,

16. մասնակցում է թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների արտաքին շուկաների ուսումնասիրմանն ու վերլուծությանը, տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

17. մասնակցում է կազմակերպությունների ստեղծման, կտրուկ աճին նպաստող գործարար մրջավայրի ձևավորմանը, խոչընդոտների բացահայտմանը և դրանց ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքներին.

18. կազմակերպում է օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ծանուցման իրականացումը ոլորտի ներկայացուցիչներին,

19. կազմակերպում է ոլորտի ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման հետ կապված գործընթացները:

Իրավունքները.

- պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից ստանալ ոլորտային առաջարկություններ, հիմնավորումներ, փաստաթղթեր և այլ նյութեր,
- պետական կառավարման համակարգի մարմիններից և այլ կառույցներից ստանալ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներ, առաջարկություններ և եզրակացություններ,
- կազմակերպել քննարկումներ գործարար համայնքի մասնակցությամբ՝ իրավական ակտերի նախագծերին և բարեփոխումներին միտված առաջարկությունները քննարկելու նպատակով.
- կազմակերպել քննարկումներ, խորհրդակցություններ և հանդիպումներ թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման խոչընդոտների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ.
- մասնակցել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտներին առընչվող պետական կառավարման և շագրգիռ մարմինների կողմից կազմակերպվող խորհրդակցություններին և քննարկումներին.
- կազմակերպել աշխատանքային քննարկումներ Հայաստանի Հանրապետությունում ոլորտային զարգացման ծրագրեր իրականացնող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների հետ համագործակցության առանձին ուղղությունների վերաբերյալ,
- վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներից պահանջել համապատասխան տեղեկություններ, փաստաթղթեր, առաջարկություններ.
- համագործակցել պետական և միջազգային կառույցների հետ՝ իր իրավասությունների սահմաններում,
- մասնակցել Նախարարության համակարգման ոլորտներին առնչվող օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ վարչության իրավասություններին առնչվող հանդիպումներին և քննարկումներին:

Պարտականությունները.

- հանձնարարել և վերահսկել Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների զարգացման պետական քաղաքականության, ռազմավարության և պետական աջակցության ծրագրերի մշակման աշխատանքները, ուսումնասիրել վերջնարդյունքները, ամփոփել և անհրաժեշտության դեպքում հայտնել կարծիք կամ տալ համապատասխան ցուցումներ, և հետևել ծրագրերի իրականացման աշխատանքներին.
- հանձնարարել և վերահսկել թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման խոչընդոտների վերհանման և դրանց վերացման ուղղված աշխատանքները, պարբերաբար ուսումնասիրել միջանկյալ արդյունքները, գնահատել դրանք և անհրաժեշտության դեպքում առաջարկել համապատասխան լուծումներ.
- նախաձեռնել և վերահսկել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտում տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման աջակցության մեխանիզմների, ուղղությունների և գործողությունների մշակման աշխատանքները,
- ուսումնասիրել և ամփոփել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների մոնիթորինգի, ձեռնարկություններում առկա խնդիրների վերհանման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունները և ներկայացնել առաջարկություններ,

- ամփոփել և գնահատել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտում պետական և մասնավոր հատվածի համագործակցության երկխոսության գործընթացները, և հանձնարարել համապատասխան մեխանիզմների մշակումը և ձևավորումը,
- հանձնարարել և վերահսկել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ներուժի ընդլայնման և մրցունակության բարձրացման, տեխնոլոգիական վերազինման և ինովացիոն լուծումների ներդրման քաղաքականության մշակման աշխատանքները, պարբերաբար ուսումնասիրել և գնահատել արդյունքները և անհրաժեշտության դեպքում առաջարկել համապատասխան լուծումներ.
- բաշխել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների արտահանման զարգացման քաղաքականության մշակման աշխատանքները բաժինների պետերի միջև,հետևել և վերահսկել դրանց իրականացումը,
- ուսումնասիրել համապատասխան տեղեկատվությունն և առաջարկությունները՝ պետություն-մասնավոր երկխոսությունում գործարար միությունների և ոլորտային ասոցիացիաների ակտիվ ներգրավման և արդյունավետ համագործակցության զարգացման վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ,
- ներկայացնել կարծիքներ, դիրքորոշումներ, առաջարկություններ և անհրաժեշտ տեղեկատվություն թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների ներդրումների ներգրավման քաղաքականության մշակման աշխատանքները իրականացնելու համար,
- պարբերաբար ստուգել և վերահսկել օրենսդրությամբ նախատեսված՝ պետական աջակցության և արտոնությունների տրամադրման գործընթացի իրականացումը,
- ուսումնասիրել տեխնոլոգիական զարգացմանն համընթաց առաջացող գլոբալ մարտահրավերներին համապատասխան երկարաժամկետ ոլորտային զարգացման ծրագրերի մշակման աշխատանքների ընթացքը, վերլուծել արդյունքները, ներկայացնել առաջարկություններ և կարծիքներ.
- ամփոփել ոլորտի ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգման, վերլուծության, արձագանքման աշխատանքները և ներկայացնել առաջարկություններ.
- հետևել և վերահսկել թեթև և ստեղծագործ արդյունաբերության զարգացման միջազգային փորձի ուսումնասիրության աշխատանքները, ամփոփել արդյունքները, ներկայացնել համապատասխան առաջարկություններ և եզրակացություններ.
- ներկայացնել դիրքորոշումներ, կարծիքներ և առաջարկություններ մաքսային, հարկային և ոչ հարկային եկամուտների քաղաքականության վերաբերյալ.
- ամփոփել թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտների արտաքին շուկաների ուսումնասիրության ու վերլուծության արդյունքները և ներկայացնել առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև միջազգային շուկաներում Հայաստանի Հանրապետության թեթև և ստեղծագործ արդյունաբերության մրցունակության բարձրացման վերաբերյալ,
- տրամադրել համապատասխան կարծիքներ, դիրքորոշումներ և առաջարկություններ կազմակերպությունների ստեղծման, կտրուկ աճին նպաստող գործարար միջավայրի ձևավորման և խոչընդոտների բացահայտման վերաբերյալ.
- վերահսկել ոլորտի ներկայացուցիչներին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ծանուցումների իրականացումը, նրանց կողմից բարձրացված հարցերի և խնդիրների վերաբերյալ տրամադրել համապատասխան կարծիքներ և պարզաբանումներ.

- ուսումնասիրել միջազգային շուկաներում թեթև և ստեղծագործ արդյունաբերության ոլորտներում տիրող իրավիճակը, ամփոփել և գնահատել արդյունքները, ներկայացնել առաջարկություններ այդ ոլորտների ընկերությունների ճանաչելիության բարձրացման և արտաքին շուկաներում շահավետ դիրքավորման հետ կապված:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների

ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: